ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXV, № 4, 1972

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ՀԱՄՄԻԿ ՍԵԴՐԱԿԻ ԱՎԵՏՅԱՆ

Լրացավ Համմիկ Սեդրակի Ավետյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 45 տարին։

Կան մարդիկ, որոնք երկարամյա անբասիր աշխատանքով կուտակելով գիտելիքներ և փորձ, իրենց 70 ամյակը դիմավորում են ավելի իմաստավորված՝ պատրաստ վերստին ծառայելու ժողովրդին ու գիտությանը։ Այդպիսիներից է Համմիկ Ավետյանը։



Հ. Ավետյանը ծնվել է ուսուցչի ընտանիքում։ Միջնադարյա կրթությունը ստացել է Թիֆլիսի իգական գիմնազիայում, իսկ 1920 թվին ընդունվել Պոլիտեխնիկ ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետը։

1926 թվին, ավարտելով ինստիտուտը, տեղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում Հայկ. ՍՍՀ Հողժողկոմատի բույսերի պաշտպանության բաժնում, որպես միջատաբան։

Բույսերի պաշտպանության նոր կազմակերպված գիտահետազոտական կայանում լայն աշխատանքներ է ծավալում՝ պարզելու Հայաստանի գյուղատնտեսական կուլտուրաներին և անտառներին վնասող միջատների տեսակային կազմը, տարածվածությունը, կենսակերպը։ 1929 թ. Հ. Ավետյանը Հողժողկոմատի կողմից գործուղվում է Լենինգրադ՝ Կենդանաբանության և ֆիտոպա-

բոլոգիայի ինստիտուտ (ԻԶԻԲ)՝ մասնագիտության մեջ խորանալու։ Ինստիտուտը հաջող ավարտելուց հետո նա աշխատանքը շարունակում է Հայաստանի բույսերի պաշտպանության կայանում։ Շուտով կայանը դառնում է ինստիտուտ, առաջանում են նոր հարցեր, պրոբլեմներ։ 1931 թ. Մ. Մակարյանի և Հ. Ավետյանի հեղինակությամբ լույս է տեսնում Հայաստանի վնասակար էնտոմոֆաունային նվիրված առաջին օրիգինալ աշխատությունը՝ «Հայկ. ՍՍՀ գյուղատնտեսական և անտառային բույսերի վնասատուները», որն այսօր էլ չի կորցրել իր թարմությունը և հաճախակի օգտագործվում է միջատաբանների կողմից։

1935 թ. կազմակերպվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալը։ Հ. Ավետյանը հրավիրվում է Կենսաբանության ինստիտուտ որպես ավագ գիտաշխատող։ 1938 թ. նույն ինստիտուտում դառնում է կենդանաբանության սեկտորի վարիչ։ 1942 թ. նա կատարում է նաև կենսաբանական ինստիտուտի գիտական քարտուղարի պարտականությունները։

1943 թ. նոյեմբերին հիմնվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ, որի կազմի մեջ է մտնում նաև նորակազմ Կենդանաբանության ինստիտուտը։ Շարունակելով աշխատել այդ ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող, Հ. Ավետյանը միաժամանակ աշխատում է (1944—1948 թթ.) կենսաբանական գիտությունների բաժանմունքում, որպես գիտական քարտուղար։

1948—1952 թթ. Հ. Ավետյանը վարում է միջատաբանության սեկտորի վարիչի պաշտոնը՝ ԳԱ ֆիտոպաթոլոգիայի և կնդանաբանական ինստիտուտում։

1953—1957 թթ. զբաղեցնում է Կենդանաբանության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը, միաժամանակ մնալով որպես անողնաշարավորների սեկտորի վարիչ։ 1957 թվից մինչև այժմ նույն ինստիտուտում ավագ գիտական աշխատող է։

Շատ լայն է Հասմիկ Ավետյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը։ Նա կենտրոնանում է պտղատու ծառատեսակների վնասատուների ուսումնասիրության վրա։ Աշխատելով գիտական հիմնարկներում, Հ. Ավետյանը հաճախակի եղել է Հայաստանի կոլեկտիվ և սովետական տնտեսություններում, մասնագիտական արժեքավոր խորհուրդներով օգնելով վնասատուների դեմ տարվող պայքարի գործին։

30-ական թվականներին Զ. Գ. Սուջյանի հետ միասին հրատարակում է «Պտղատու ծառատեսակների վնասատուները և հիվանդությունները ու պայքարը նրանց դեմ» գրքերը (1934 և 1937 թթ.)։ 1933 թվին նրա նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ կազմակերպվում է կենսաբանական մեթոդով պայքար՝ խնձորենու լուրջ վնասատու՝ Բրդապատ լվիճի դեմ։

Աֆելինուսի օգտագործումը վնասատուների դեմ կենսաբանական եղանակով կազմակերպված առաջին հաջողակ փորձն էր Հայաստանում և առաջիններից մեկը ՍՍՀՄ-ում։ Հետագայում Հասմիկ Ավետյանի գիտական հետաքրքրությունների ոլորտը ավելի է լայնանում։ Նա զբաղվում է պտղակերի, կոկցիդների, ոսկեբզեզների և մի շարք այլ առաջնակարգ վնասատուների բազմակողմանի ուսումնասիրությամբ։ Նրա կողմից հավաքվում է հարուստ նյութ՝ որը շարադրվում է «Պտղատու ծառատեսակների վնասատուները Հայկ. ՍՍՀ-ում» մենագրության մեջ (1952 թ.)։ Նույն աշխատությունը 1953 թ. նրա կող-

մից որպես դիսերտացիոն աշխատանք ներկայացվում է պաշտպանության կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճան ստանալու համար։

Հայաստանի գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների մասին աշխատություններում այն մինչև օրս մնում է եզակի, պարունակում է հարուստ տեղեկություններ՝ պտղատու ծառատեսակների վնասատուների տեսակային կազմի, տարածվածության, ֆենալոգիայի, պատճառած վնասի (տարբեր գոտիներում) և այլնի մասին։ Այդ աշխատությունը այսօր էլ մնում է հայ միջատաբանների սեղանի գիրք և լայնորեն օգտագործվում։ 1947 թ. Հայաստանում բամբակենու դաշտերում հանդես է գալիս նոր վտանգավոր վնասատու՝ տուղտացեցը։ Նրա կողմից առաջին անգամ ուսումնասիրվում են տուղտացեցը պարազիտող միջատները, փորձեր են արվում նրա դեմ տրիխոգրամա օգտագործելու։ Պարզվում է, որ տուղտացեցի վրա պարազիտում են 20-ից ավելի միջատներ։

Այդ տարիներից սկսած Հ. Ավետյանը նվիրվում է պտղատու ծառատեսակների վնասատուների էնտոմոֆագերի ուսումնասիրմանը։ Նրա կողմից կազմած քարտարանը բովանդակում է 900 տեսակի էնտոմոֆագ։

Վ. Ա. Տրյապիցինի և Ե. Կ. Էրտևցյանի հետ համատեղ հրատարակության է պատրաստել Chalcidoidae վերնաընտանիքին նվիրված աշխատությունը, որի մեջ տրվում է 324 տեսակ։

Հասմիկ Ավետյանը հրատարակել է աշխատություններ նաև վնասատու միջատների այլ խմբերի վերաբերյալ (Շալա ծղրիդը, կեղծ կեղևակերը և այլն) որոնք մեծապես նպաստել են այդ վնասատուների դեմ պայքարի միջոցների մշակմանը։ Նրա հետազոտությունների արդյունքներից շատերը արտացոլվել են Գյուղատնտեսության մինիստրության կողմից կազմվող հրահանգներում։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Հասմիկ Ավետյանի հետազոտությունները արարատյան կոշենիլի միջատի (որդան կարմիր) վերաբերյալ։ Հայկ. ՍՍՀ Մինիստրների Սովետի հանձնարարությամբ ներկայումս Կենդանաբանության ինստիտուտին կից կազմակերպված է հատուկ լաբորատորիա, որը զբաղված է կոշենիլի ուսումնասիրությամբ՝ նպատակ ունենալով վերականգնելու բնական կարմիրի արտադրությունը Հայաստանում։ Ի դեպ, ասենք, որ մի ժամանակ Հայաստանի որդան կարմիրը համաշխարհային հռչակ ուներ։ Այդ հետազոտությունների ժամանակ օգտագործում են նաև Ավետյանի կողմից ժամանակին կատարած հետազոտությունների արդյունքները։

Հսկայական է այն ավանդը, որը Հ. Ավետյանը ներդրել է «Գյուղատնտեսական կուլտուրաների, անտառի և պահեստի վնասատուները Հայաստանում» աշխատությունը կազմելու և հրատարակության նախապատրաստելու գործում։ Հանդիսանալով աշխատության հեղինակներից և խմբագիրներից մեկը, նա ջանք չի խնայել բարձրորակ ձեռնարկ ստեղծելու համար, որը բովանդակում է տեղեկություններ Հայաստանում տարածված 1700-ից ավելի տեսակ վնասատուների (միջատներ, տզեր, նեմատոդներ, կրծողներ և այլն) վերաբերյալ։ Աշխատությունը, որը լույս կտեսնի հայերեն 50 մամուլ ծավալով, անշուշտ մեծ ծառայություն կմատուցի բույսերի պաշտպանության գործին Հայաստանում։

Դժվար է գերագնահատել այն ստեղծագործ, անձնուրաց աշխատանքը, որը տասնյակ տարիներ Հ. Ավետյանի կողմից տարվել է՝ Կենդանաբանության ինստիտուտում՝ միջատների հավաքածուներ ստեղծելու և պահպանելու ուղ-

զությամբ։ Այսօր առաջին հերթին դարձյալ նրան ենք պարտական, որ Հայաստանում ունենք միջատների հարուստ հավաքածու, որը Սովետական Միությունում իր տեսակի մեջ համարվում է լավագուններից մեկը։

Հետազոտական աշխատանքներին զուգընթաց Հ. Ավետյանը ուժ և եռանդ չի խնայել երիտասարդ կենսաբաններ պատրաստելու գործում։ Նրանցից շատերը արդեն ճանաչված գիտնականներ են։

Նրա դիրեկտորության օրոք ինստիտուտը նախաձեռնեց «Հայաստանի կենդանական աշխարհ» բազմահատոր աշխատության հրատարակությունը։ Նա ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ամբողջ Ակադեմիայի հրատարակչական գործում։ Ներկայումս Հ. Ս. Ավետյանը հանդիսանում է «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբագրական կոլեգիայի անդամ։

1963 թվից, այսինքն հիմնադրման օրից, Հասմիկ Ավետյանը Համամիութենական միջատաբանական ընկերության Հայկական բաժանմունքի նախագահն է։ Աշխատանքային երկարամյա անբասիր գործունեության համար Հասմիկ Ավետյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով, Հայկ. ՍՍՀ Գերագույն Սովետի պատվոգրով, ինչպես նաև աշխատանքային արիության համար և Լենինի 100 ամյակի հոբելյանական մեդալներով։

Հ. Ավետյանը երկու անգամ ընտրվել է Երևանի Կիրովյան շրջսովետի դեպուտատ։ 1957 թվից մինչև 1963 թիվը եղել է ՀՍՍՀ Գերագույն դատարանի ժողովրդական ատենակալ։

Ի սրտե ցանկանանք սիրելի Հասմիկ Սեդրակի Ավետյանին երկար տարիների կյանք, քաջառողջություն, կենսուրախություն և ստեղծագործական նոր հաջողություններ։